ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2018թվականի N 23

ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Դիմիտրով համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 21-ի թիվ 9 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝
1. Համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց, անժամկետ օգտագործման տրամադրելու մասին:

2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն անշարժ գույք նվիրաբերելու և Դիմիտրով համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 29-ի N1 0 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆԱՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
<<. Արարատի մարզ. գ.Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2018թվականի N 24

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն <<Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում>>: <<Դիմիտրովի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը չունի լիցենզիա: Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ պայման է կրթության ծրագրեր իրականացնող կազմակերպության ապահովվածությունը շենքային պայմաններով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով , համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Դիմիտրով գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը՝ մանկապարտեզի շենքը իր զբաղեցրած և հարակից 7300 քառակուսի մետր հողատարածքով /վկայական N 03122014-03-0030/, որը գտնվում է Դիմիտրով համայնք, Մայակովսկու փողոց 43/2 հասցեում/ ծածկագիր 03-038-0016-0001/ անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով հատկացնել <<Դիմիտրովի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Հանձնարարել մանկապարտեզի տնօրենին ՝ կատարել գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցում:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
<<. Արարատի մարզ. գ.Դիմիտրով. (094)730000.(093)991354. dimitrov-gyuxapetaran@mail.ru.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2018թվականի N 25

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N10 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածին համապատասխան, Դիմիտրով համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Դիմիտրով համայնքի ղեկավարին, Հրաչյա Քոչարի 1 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը համայնքի սեփականությունն է և բաղկացած է 123.59 քառակուսի մետր եկեղեցու տարածքից և 0.14 հեկտար հատուկ պահպանվող տարածքների հողատարածքից, նվիրաբերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ):

2. Դիմիտրով համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հնարապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հրաչյա Քոչարի 1 հասցեում գտնվող անշարժ գույքի հանձնման-ընդունման, գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքների կազմակերպումը՝ վերջինս

իրականացնելով նվիրառուի միջոցների հաշվին, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. Ուժը կորցրած ճանաչել Դիմիտրով համայնքի 2015 թվականի ապրիլի 29-ի <<ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ>> ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 10 որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ Կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ Կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ Կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ Կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ Կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ Կողմ

ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆԿԱՐԴ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ